# Ինքնության Գողություն եւ Ձեր Սոցիալական Ապահովության Համարը

## Բովանդակություն


| | |
|---|---|
| Ձեր համարը գաղտնի է՝ | 1 |
| Ինչպե՞ս կարող է որևէ մեկը գողանալ Ձեր քարտը՝ | 2 |
| Զգույշ վարվեք Ձեր Սոցիալական Ապահովության քարտի և համարի հետ՝ | 2 |
| Ի՞նչ անել, եթե կարծում եք, որ որևէ մեկը օգտագործում է Ձեր համարը՝ | 2 |
| Ի՞նչ անել, եթե ինքնության գողը վարկային խնդիրներ է ստեղծում Ձեզ համար՝ | 3 |
| Արդյո՞ք Դուք պետք է ստանաք նոր Սոցիալական Ապահովության համար՝ | 4 |
| Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ | 4 |


Ինքնության գողությունը ամենաարագ աճող հանցագործություններից է Ամերիկայում: Անազնիվ անձը, որն ունի Ձեր Սոցիալական Ապահովության համարը, կարող է օգտագործել այն՝ Ձեր մասին այլ աձնական տեղեկություններ ստանալու նպատակով: Ինքնության գողերը կարող են օգտագործել Ձեր համարը և Ձեր վարկավորման լավ պատմությունը՝ Ձեր անունից ավելի շատ վարկերի համար դիմելու նպատակով: Այնուհետև նրանք օգտագործում են կրեդիտ քարտերը և չեն վճարում հաշիվները, և դա վնաս է հասցնում Ձեր վարկային (քրիդիտային) պատմությանը: Դուք կարող եք գլխի չընկնել, որ որևիցե մեկը օգտագործում է Ձեր համարը, և այնուհետև Դուք ստանում եք վարկի տրամադրման մերժում, կամ Դուք սկսում եք զանգեր ստանալ անծանոթ վարկառուներից (պարտքատերերից), որոնք պահանջում են վճարել այնպիսի ապրանքների համար, որոնք Դուք երբեք չեք գնել:

Ձեր Սոցիալական Ապահովության համարն անօրինական կերպով օգտագործող ու Ձեր ինքնությանը հավակնող որևէ մեկը կարող է բազմաթիվ խնդիրներ ստեղծել:

## Ձեր համարը գաղտնի է՝

Սոցիալական Ապահովության Վարչությունը պաշտպանում է Ձեր Սոցիալական Ապահովության համարը և գաղտնի է պահում Ձեր մասին եղած տվյալները:

Մենք ոչ ոքի չենք տալիս Ձեր համարը՝ բացառությամբ օրենքով լիազորված դեպքերի: Դուք պետք է զգուշանաք Ձեր համարը տրամադրելուց, նույնիսկ երբ Ձեզանից այն խնդրում են: Դուք պետք է հարցնեք, թե ինչու՞ է անհրաժեշտ Ձեր համարը, ինչպե՞ս է այն օգտագործվելու և ի՞նչ կպատահի եթե Դուք մերժեք: Այս հարցերի պատասխանները կարող են օգնել Ձեզ որոշելու, թե արդյոք՞ Դուք ցանկանում եք տրամադրել Ձեր Սոցիալական Ապահովության համարը:

## Ինչպե՞ս կարող է որևէ մեկը գողանալ Ձեր քարտը՝

Ինքնության գողերը Ձեր անձնական տվյալները ստանում են՝

- Գողանալով դրամապանակներ, պայուսակներ և նամակներ (բանկի և վարկային (կրեդիտ) քարտի հաշվետվություններ, նախապես հաստատված վարկային առաջարկներ, նոր վճարագրեր և հարկային տեղեկատվություն);
- Գողանալով անձնական տվյալներ, որոնք Դուք տրամադրում եք Համացանցի անապահով կայքերում, ինչպես նաև բիզնեսից կամ ձեռնարկությունների կադրերի բաժնում պահվող անձնական գրանցումներից և տանը պահվող անձնական տեղեկություններից;
- Մանրակրկիտ փնտրտուկ կատարելով Ձեր աղբում, ձեռնարկությունների աղբամաններում և հասարակական աղբարկղերում՝ անձնական տվյալներ գտնելու ակնկալիքով;
- Հեռախոսով կամ էլ. փոստով, հանդես գալով այնպիսի մի անձի անունից, օրինակ գործատուներ կամ տանտերեր, ում օրինապես անհրաժեշտ են Ձեր մասին տվյալները; կամ
- «Ներքին» աղբյուրներից գնելով անձնական տեղեկություններ: Օրինակ՝ ինքնություն գողացող անձը կարող է վճարել խանութի աշխատողին և ստանալ այնպիսի տեղեկություններ Ձեր մասին, որոնք հայտնվել են ապրանքների, ծառայությունների կամ վարկի համար դիմելիս:

## Զգույշ վարվեք Ձեր Սոցիալական Ապահովության քարտի և համարի հետ՝

Երբ անցնում եք նոր աշխատանքի, համոզվեք, որ Ձեր գործատուն իր տրամադրության տակ ունի Ձեր ճշգրիտ Սոցիալական Ապահովության համարը, այնպես որ Ձեր գրանցումները ճշգրիտ են: Ներկայացրեք Ձեր Սոցիալական Ապահովության համարը ֆինանսական հաստատությանը (հաստատություններին)՝ հարկային հաշվետվության նպատակներով: Ապահով վայրում պահեք Ձեր քարտը և Սոցիալական Ապահովության համարը արտացոլող որևէ այլ փաստաթղթերը: Սովորաբար, Ձեզ հետ ՄԻ կրեք Ձեր քարտն ու համարը արտացոլող մյուս փաստաթղթերը:

## Ի՞նչ անել, եթե կարծում եք, որ որևէ մեկը օգտագործում է Ձեր համարը՝

Երբեմն, մտադրված կամ պատահաբար, Սոցիալական Ապահովության նույն համարից օգտվում են մեկից ավելի անձինք: Եթե կասկածում եք, որ որևէ մեկը օգտագործում է Ձեր համարը աշխատանքային նպատակներով, պետք է դիմեք մեզ՝ առկա խնդիրը զեկուցելու համար: Մենք Ձեզ հետ միասին կստուգենք Ձեր հասույթը՝ համոզվելու, որ մեր տվյալները ճիշտ են:

Դուք կարող եք նաև ստուգել Ձեր հաշվառման ներքո մուտքագրվող եկամուտները՝ Ձեր *Սոցիալական Ապահովության Հաշվետվությունից* (*Social Security Statement*): Հաշվետվությունն հասանելի է առցանց՝ առնվազն 18 տարեկան և ավելի բարձր աշխատողների համար: Ձեր



*(շրջել)*

*Հաշվետվությունն* ստանալու համար այցելեք ***www.socialsecurity.gov/myaccount*** կայքէջը և բացեք անձնական հաշիվ:

## Ի՞նչ անել, եթե ինքնության գողը վարկային խնդիրներ է ստեղծում Ձեզ համար՝

Եթե որևէ մեկը չարաշահել է Ձեր Սոցիալական Ապահովության համարով կամ այլ անձնական տեղեկատվությամբ՝ Ձեզ համար վարկային կամ այլ խնդիրներ ստեղծելու համար, ապա Սոցիալական Ապահովությունը չի կարող լուծել այդ խնդիրները նման դեպքերում: Սակայն կա մի քանի բան, որոնք Դուք պետք է անեք:

Այցելե՛ք ***IdentityTheft.gov*** կայքը՝ ինքնության գողության դեպքը զեկուցելու համար և վերականգնման ծրագիր ստանալու համար: ***IdentityTheft.gov*** ուղղորդում է Ձեզ վերականգնման գործընթացի յուրաքանչյուր քայլով: Դա համապարփակ աղբյուր է, որը կառավարվում է Առևտրի Դաշնային Հանձնաժողովի (Federal Trade Commission) կողմից, որը հանդիսանում է սպառողների պաշտպանության ազգային գործակալություն: Դուք կարող եք նաև զանգահարել **1-877-IDTHEFT** (**1-877-438-4338**), հեռատիպ (TTY) **1-866-653-4261** հեռախոսահամարներով:

Հնարավոր է, Դուք նաև ցանկանաք դիմել Ներքին Եկամուտների (Հարկային) Վարչություն (Internal Revenue Service (IRS)): Ինքնության գողը կարող է նաև Ձեր Սոցիալական Ապահովության համարով հարկային հայտարարագիր ներկայացնել՝ Ձեր փոխհատուցումը ստանալու նպատակով: Եթե Դուք ունեք փոխհատուցում ստանալու իրավասություն, ապա գողը կարող է Ձեզանից շուտ ներկայացնել հայտարարագիրը և ստանալ Ձեր հատուցումը: Այնուհետև, երբ Դուք ներկայացնեք հայտարարգիրը, IRS-ը կմտածի, որ Դուք արդեն ստացել եք Ձեր հատուցումը: Ձեր Սոցիալական Ապահովության համարի գողության դեպքում՝ մեկ ուրիշ անձ կարող է օգտագործել այն՝ աշխատանքի տեղավորվելու նպատակով: Այդ անձի գործատուն կզեկուցի նրա վաստակած գումարը IRS-ին՝ օգտագործելով Ձեր Սոցիալական Ապահովության համարը: Արդյունքում կստեղծվի տպավորություն, կարծես Դուք Ձեր հարկային հայտարարագրում չեք զեկուցել Ձեր ողջ եկամուտը: Եթե կարծում եք, որ Դուք կարող եք հարկերի հետ կապված խնդիրներ ունենալ, այն պատճառով, որ որևէ մեկը գողացել է Ձեր ինքնությունը, ապա այցելե՛ք ***www.irs.gov/uac/Identity-Protection*** կայքը կամ զանգահարե՛ք **1-800-908-4490** հեռախոսահամարով:

Դուք պետք է նաև առցանց բողոք ներկայացնեք՝ Համացանցային Հանցագործությունների Բողոքների կենտրոն (Internet Crime Complaint Center (IC3)) ***www.ic3.gov*** կայքի միջոցով:

IC3-ն համացանցային հանցագործությունների (կիբերհանցագործությունների) զոհերին տրամադրում է բողոք ներկայացնելու հարմար և օգտագործման տեսանկյունից դյուրին գործիք, որը զգուշացնում է իշխանություններին՝ կասկածելի քրեական կամ քաղաքացիական խախտումների մասին: IC3-ն բոլոր բողոքներն ուղարկում է մեկ կամ մի քանի իրավապահ կամ կանոնակարգող գործակալություններին, որոնք ունեն արդարադատություն իրականացնելու իրավասություն:

IC3-ի առաքելությունն է ստանալ, մշակել և համապատասխան մարմնին հանձնել բողոքները՝ կապված կիբերհանցագործությունների արագ ընդլայնվող ոլորտի հետ: IC3-ը ծառայում է ավելի ընդարձակ իրավապահ համայնքին, որը պայքարում է կիբերհանցագործությունների դեմ: Դրանց թվում են դաշնային, նահանգային, տեղական և միջազգային գործակալությունները:

IC3-ն արտացոլում է Հետաքննությունների Դաշնային Բյուրոյի (Federal Bureau of Investigation), Մտավոր Ոլորտի



*(շրջել)*

Հանցագործությունների դեմ Պայքարի Ազգային Կենտրոնի (National White Collar Crime Cente) և Արդարադատության Աջակցության Բյուրոյի (Bureau of Justice Assistance) միջև համագործակցությունը:

Դուք պետք է նաև պարբերաբար վերահսկե՛ք Ձեր վարկային հաշվետվությունները: Դուք կարող եք անվճար ստանալ Ձեր վարկային հաշվետվությունները առցանց՝ ***www.annualcreditreport.com*** կայքէջում:

## Արդյո՞ք Դուք պետք է ստանաք նոր Սոցիալական Ապահովության համար՝

Եթե Դուք ձեռնարկել եք բոլոր հնարավոր քայլերը՝ Ձեր Սոցիալական Ապահովության համարի չարաշահման հետևանքով առաջացած խնդիրները լուծելու համար, սակայն ինչ-որ մեկը դեռևս օգտագործում է Ձեր համարը, ապա մենք կարող ենք նոր համար տրամադրել Ձեզ:

Դուք չեք կարող Սոցիալական Ապահովության նոր համար ստանալ՝

- Եթե Ձեր Սոցիալական ապահովության քարտը կորել կամ գողացվել է, սակայն չկա որևէ ապացույց, որ այն օգտագործվում է որևէ մեկի կողմից:
- Սնանկացման համար դիմելու հետևանքներից խուսափելու համար: կամ
- Եթե Դուք ունեք օրենքից կամ օրենքի առջև Ձեր պատասխանատվությունից խուսափելու մտադրություն:

Եթե որոշում եք դիմել նոր համար ստանալու համար, ապա անհրաժեշտ կլինի, որպեսզի Դուք ապացուցեք Ձեր ինքնությունը, տարիքը, ԱՄՆ քաղաքացիությունը կամ ներգաղթականի կարգավիճակը: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրեք *Ձեր Սոցիալական ապահովության համարն ու քարտը* (*Your Social Security Number and Card) տեղեկագիրը* (Publication Number 05-10002) (Հրատարակություն թիվ 05-10002-AM): Անհրաժեշտ կլինի նաև ապացույցներ տրամադրել այն մասին, որ չարաշահման հետևանքով Դուք շարունակում եք խնդիրներ ունենալ:

Նկատի ունեցեք, որ նոր համարը հավանաբար չի լուծի Ձեր բոլոր խնդիրները: Դրա պատճառն է, որ այլ կառավարական մարմիններ (օրինակ ինչպես՝ IRS-ը և նահանգային տրանսպորտային միջոցների գրանցման գերատեսչությունները (state motor vehicle agencies)) և մասնավոր ընկերությունները (օրինակ ինչպես՝ բանկերը և վարկային գործակալությունները) իրենց գրանցումներում կունենան Ձեր հին համարի տվյալները: Այլ անձնական տեղեկատվության հետ մեկտեղ, վարկային գործակալությունները օգտագործում են համարը՝ Ձեր վարկային պատմությունը նույնականացնելու նպատակով: Դա հատկապես ճշմարտացի է այն դեպքերում, երբ Ձեր մյուս անձնական տվյալները, օրինակ ինչպես՝ անունը և հասցեն մնում են անփոփոխ:

Եթե Դուք ստանում եք Սոցիալական Ապահովության նոր համար, ապա Դուք այլևս չպետք է օգտագործեք Ձեր հին համարը:

Ինքնության գողության որոշ զոհերի համար՝ նոր համարը իրականում նոր խնդիրներ է ստեղծում: Եթե հին վարկերի մասին տեղեկատվությունը կապակցված չէ նոր համարի հետ, ապա նոր համարի ներքո վարկային պատմության բացակայությունը առավելապես կդժվարեցնի Ձեզ համար վարկ ստանալու հնարավորությունները:

## Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու



*(շրջել)*

այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

## Այեցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենահարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանլու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

## Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:



**Social Security Administration**
Publication No. 05-10064-AM | June 2017
Ինքնության Գողություն եւ Ձեր Սոցիալական Ապահովության Համարը
Identity Theft and Your Social Security Number (Armenian)
Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: